ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹԻՎ 22 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

հասցե Ք.Երևան, 9-րդ զանգված Վիլյամսի 3 շենք 90 հեռ. 66-62-10

N 022/28 „24„ հունվարի 2014թ.

«ՊՈԼ 22 – ՇՀԱՊՁԲ – 11/15 » ծածկագրով
գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին

«ՊՈԼ22- ՇՀԱՊՁԲ – 11/15 » ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում <<Թիվ 22 պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի 2014թ. կարիքների բավարարման համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր ընկերության միջև կնքված <<ՇՀԱՊՁԲ-11/15>> շրջանակային ծածկագրով „Քիմիական նյութերի„ գնման համաձայնագրով ապրանքներ:

Մատակարարման պայմաններն են՝ Վաճառողը տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի ապրանքը հասցնում է Գնորդին Ք. Երևան, Նորքի 7-րդ զանգ. Ավետիսյան փողոց 5/7 հասցեով, գնման ժամանակացույցով նախատեսված քանակությամբ և մատակարարման ժամկետում: Պոլիկլինիկայում լաբորատոր-գործիքային հետազոտությունների կատարման համար օգտագործվող քիմիական նյութերի պատվերի առաքում ընկերության կողմից՝ պատվերը ընդունելուց մինչև երկու օրվա ընթացքում: Գնման առաջարկում ներկայացված գներ պետք է ներառեն բեռնաթափման արժեքը, հարկերը, տրանսպորտային և հնարավոր այլ ծախսերը: Նյութերը պետք է ունենան առնվազն 2-3 ամսի պահպանման ժամկետ:

Հայտնում ենք, որ գնման առարկաների վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկները անհրաժեշտ է ներկայացնել քաղաք Երևան, Նորքի 7-րդ զանգ. Ավետիսյան փողոց 5/7 հասցեով, առաջին հարկ, կադրերի բաժին մինչև **2014թ. փետրվարի 6-ը, ժամը 14^00-ը, մինչև գնային առաջարկներ պարունակող ծրարները բացելու պահը:**

Մասնակցի կողմից հարցի ներկայացումը պարտադիր չէ:

Հայտը ներառում է <<ՊՈՒ22 -ՇՀԱՊՁԲ-11/15>> ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու դիմում /հավելված N3/, գնային առաջարկ, որը ներկայացվում է ապրանքի միավորի գնով /հավելված N4/.

Հայտն անհրաժեշտ է, ներկայացնել «ՊՈՒ 22- ՇՀԱՊՁԲ – 11/15 » գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Հայտը պարունակող ծրարը ներկայացվում է փակ վիճակում,ամրակցված, ստորագրված և կնքված ներկայացնողի կողմից: Ծրարում ներկայացվող փաստաթղթերը կազմվում են մեկ բնօրինակից և երկու պատճեններից:

Շրջանակային համաձայնագիր կնքած անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի գնային առաջարկ, գնային առաջարկների հավասարության դեպքում և գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կազմակերպվելու են միաժամանակյա բանակցություններ:

Եթե հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ապա ծավալների [illegible] նպատակով հանձնաժողովի կողմից առաջարկված գների նվազեցման նպատակով, ըստ գնային պայմաններին բավարար գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ:

Խնդրում ենք ծանուցումն ստանալու էլեկտրոնային տարբերակով պատասխանը հաստատել ստացման մասին:

Առդիր 14 էջ:

*Հարգանքով*

*<<Թիվ 22 պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի տնօրեն* Մկրտչյան

Ս.Ոսկանյան
Հեռ.2601/ 19-12-09

# ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N <<22ՊՈՒ -ՇՀԱՊՁԲ-11/15>>

ք. Երևան «___» _____ 2014 թ.

,,____պատվիրատուի անվանումը________________________,, ի դեմս _______________________յանի,

որը գործում է -----------------------------կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և ________________________-ն, ի դեմս Ընկերության տնօրեն ______________________-ի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ________________________ (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1. Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2. Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

**3.1. Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1. Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2. Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող ապրանք.

ա) չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը,

բ) հրաժարվել սույն պայմանագիր կատարելուց և պահանջել վերադարձնել Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3. Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանք այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտվել է սույն պայմանագիրը.

3.1.4.1. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5. Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

**3.2. Գնորդը պարտավոր է՝**

3.2.1. Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները.

3.2.2. Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3. Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը.

3.2.4. Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3. Վաճառողն իրավունք ունի**

3.3.1. Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում սույն պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխանող մատակարարված Ապրանքը.

3.3.2. Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունները խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով.

3.3.3. Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված սույն պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխանող Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարը.

3.3.4. Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված Գնորդի կողմից ընդունած Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա ապրանքի քանակի հաշվին:

**3.4. Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1. Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում.

3.4.2. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք.

3.4.3. Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր.

3.4.4. Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2. կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը.

3.4.5. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժերը և տուգանքը.

3.4.6. Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը.

3.4.7. Սույն պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները.

3.4.8. Սույն պայմանագրի կատարման /կանխավճարի/ ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

**4. Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ ________________ (տառերով) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N 2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2. Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման

ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են՝ սակայն ոչ ուշ 2014 թվականի դեկտեմբերի 25-ից:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1. Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրությամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

6.2. Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները,

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3. Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1. Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2. Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3. Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին անհամապատասխան ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4. Սույն պայմանագրի 7.2 և 7.3 նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարից:

7.5. Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերը իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7. Տույժերի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և

արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Այլ պայմաններ

9.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը:

9.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

9.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2. Սույն Պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

9.4. Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում (Վաճառող և /կամ/ Գնորդ) օգուտները /խնայողությունները/ և /կամ/ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանից բխող պարտավորությունների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Գնորդի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.6. Սույն պայմանագիրը կազմված է 5 (հինգ) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2 և 3 հավելվածները՝ բաղկացած է 9 (ինը) թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8. Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| | |
|---|---|
| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| Կազմ. անվանումը՝ | Կազմ. անվանումը՝ |
| Հասցե՝ | Հասցե՝ |
| Հեռ. | Հեռ. |
| ՀՎՀՀ | ՀՎՀՀ |
| h/h | h/h |
| Բանկ՝ | Բանկ՝ |
| Տնօրեն՝ | Տնօրեն՝ |
| -------------------------------- | -------------------------------- |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
<<   >> <<   >> 20 թ. կնքված
N ,,ՊՈԼ22-ՇՀԱՊՁԲ-11/15 ,, ծածկագրով գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Չ/Բ | Ապրանքի անվանումը | Չափման միավոր | Նկարագրություն |
|---|---|---|---|
| 1 | Ազոպիրամ | հատ | Բժշկական գործիքների վրա արյան թաքնված հետքերը հայտնաբերելու ռեակտիվ |
| 2 | ԱԼՏ 2X60 | հավաք | Ալանինտրանսամինազայի որոշման թեստ-հավաքածու ԱԼՏ-UV Մեթոդ. կինետիկ; Ֆորմատ. 2x60մլ; Ստուգվող նմուշ. արյան շիճուկ/պլազմա/; Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն; Ֆիրմային նշանի առկայությունը; Սերտիֆիկատ. ISO 9001; Պահպանման պայմանները 2-8$^0$C |
| 3 | ԱՍՏ 2X60 | հավաք | Ասպարտատամինոտրանսֆերազայի որոշման թեստ-հավաքածու ԱՍՏ-UV Մեթոդ. կինետիկ; Ֆորմատ. 2x60մլ; Ստուգվող նմուշ. արյան շիճուկ/պլազմա/; Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն; Ֆիրմային նշանի առկայությունը; Սերտիֆիկատ. ISO 9001; Պահպանման պայմանները 2-8$^0$C, I |
| 4 | ԱՍՕ-լատեքս 40 թեստ | հավաք | Մեթոդ-լատեքսային ագլուտինացիա 40 թեստ , ստուգվող նմուշ - արյան շիճուկ , բուֆերային աղային լուծույթ 20 մլ /ph-8.2/պլաստիկյա սլայդ 2 հատ , բազմ. օգտ |
| 5 | Անիոն ժել | հատ | Դենատուրացված էթանոլ 70.00+ հավելումներ , 1լ պոլիէթիլենային շշիկներով |
| 6 | Բիլիռուբին Դ+Տ -120մլ/120մլ | հատ | Ընդհանուր և ուղղակի բիլիռուբինի որոշման թեստ-հավաքածու ԲԻԼԻՌՈՒԲԻՆ D+T Մեթոդ: ֆոտոմետրիկ; Ֆորմատ. 120/120; Ստուգվող նմուշ. արյան շիճուկ/պլազմա; Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն; Ֆիրմային նշանի առկայությունը; Սերտիֆիկատ. ISO 9001; Պահպանման պայմանները 15-25$^0$C, |

| | | | |
|---|---|---|---|
| 7 | Գլյուկոզա 4X100 , ներառյալ ստանդարտ | հավաք | Գլյուկոզայի որոշման թեստ-հավաքածու Գլյուկ.-կոլ. Մեթոդ. ֆոտոկոլորիմետրիկ; Ֆորմատ. 4x100մլ; Ստուգվող նմուշ. արյան շիճուկ/պլազմա/; Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն; Ֆիրմային նշանի առկայությունը; Սերտիֆիկատ. ISO 9001; Պահպանման պայմանները 2-8$^{0}$C, |
| 8 | Ժավել սոլիդ | հատ | 1կգ , 320 հաբ , դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ , 1.5գ ակտիվ քլորի պարունակությամբ |
| 9 | Թրոմբոպլաստին 6X4մլ | հավաք | Թրոմբոպլաստինի որոշման թեստ-հավաքածու Մեթոդ: ֆիբրինա•ոյացմանժամանակի որոշում; Ֆորմատ.6x4մլ (120 թեստ); Ստուգվող նմուշ. պլազմա; |
| 10 | Խոլեստերին 2X100 , ներառյալ ստանդարտ | հավաք | Ընդհանուր խոլեստերինի որոշման թեստ-հավաքածու Խոլ.-կոլ.Մեթոդ: ֆոտոկոլորիմետրիկ; Ֆորմատ. 2x100մլ; Ստուգվող նմուշ. արյան շիճուկ/պլազմա/; Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն; Ֆիրմային նշանի առկայությունը; Սերտիֆիկատ. ISO 9001; Պահպանման պայմանները 2-8$^{0}$C |
| 11 | Հեքսանյուզ 1լ | հատ | 9.75% Դիդեցիլդի-մեթիլամոնիումի քլորիդ ,1% պոլիհեքսամեթիլեն / ՉԱՄ-4-րդ սերնդի /,գուանիդին ,ինչպես նաև գործառնական բաղադրիչներ , կոռոզիայի ինհիբիտոր և այլն |
| 12 | Թեստ ռեագենտ հակա Ա 10մլ | ֆլ | Արյան II խմբի որոշման թեստ-հավաքածուՄեթոդ. լատեքս ա•լյուտինացիա;Ֆորմատ. 10 մլ.; Ստու•վող նմուշ. արյան շիճուկ/պլազմա; Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն; Ֆիրմային նշանի առկայությունը; Սերտիֆիկատ. ISO 9001; Պահպանման պայմանները 2-80C |

| | | | |
|---|---|---|---|
| 13 | Թեստ ռեագենտ հակա ԱԲ 10մլ | ֆլ | Արյան II խմբի որոշման թեստ-հավաքածուՄեթոդ. լատեքս ա•լյուտինացիա;Ֆորմատ. 10 մլ.; Ստու•վող նմուշ. արյան շիճուկ/պլազմա; Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն; Ֆիրմային նշանի առկայությունը; Սերտիֆիկատ. ISO 9001; Պահպանման պայմանները 2-80C |
| 14 | Թեստ ռեագենտ հակա Բ 10մլ | ֆլ | Արյան III խմբի որոշման թեստ-հավաքածուՄեթոդ. լատեքս ա•լյուտինացիա;Ֆորմատ. 10 մլ.; Ստու•վող նմուշ. արյան շիճուկ/պլազմա;Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն;Ֆիրմային նշանի առկայությունը; Սերտիֆիկատ. ISO 9001; Պահպանման պայմանները 2-80C, |
| 15 | Թեստ ռեագենտ հակա Դ 10մլ | ֆլ | Արյան rh (D) ռեզուս համակարգի անտիգենի որոշման թեստ-հավաքածուՄեթոդ. լատեքս ագլյուտինացիա;Ֆորմատ. 10 մլ.; Ստուգվող նմուշ. արյան շիճուկ/պլազմա;Հանձնելու պահին պիտանիության ժամկետի Ֆիրմային նշանի առկայությունը; Սերտիֆիկատ. ISO 9001; Պահպանման պայմանները 2-80C, |
| 16 | Ցոլիկլոն C 5մլ | ֆլ | Արյան rh (C) ռեզուս համակար•ի անտի•ենի որոշման թեստ-հավաքածու Ցոլիկլոն անտի C Մեթոդ. լատեքս ա•լյուտինացիա; Ֆորմատ. 5 մլ.;Ստու•վող նմուշ. արյան շիճուկ/պլազմա; |
| 17 | Մ.գլյուկոզա | լիտր | Փաթեթավորում պլաստմասե տարա 1լ |
| 18 | Մեզի անալիզատոր 1G գլյուկ, որոշ, | թեստ | Գլյուկոզայի որոշումը մեզի մեջ ,փաթեթ. 100 թեստ |
| 19 | Մեզի անալիզատոր Կոմբուր10 ՈՒՒՔՍ100թեստ | հավաք | Ուրեասիս 1100 մեզի անալիզատորի համար ֆորմատ 100 թեստ երիզ |
| 20 | Ռեմատոիդ ֆակտոր -100թեստ | հավաք | Ռևմատոիդային ֆակտորների որոշման թեստ- հավաքածու. լատեքսային ա•լյուտինացիա;Ֆորմատ. 100 թեստ; Ստու•վող նմուշ. արյան շիճուկ;բուֆեր աղային լուծույթ / pH 8.2/ 20մլ պլաստիկ սլայդ 4 հատ / բազմակի օգտ./ |
| 21 | Ստենոգրաֆիայի մածուկ 500մլ | հատ | CL-ISO Սերտիֆիկատ ԳՈՍՏ |
| 22 | Սուրֆակտոս 1լ | հատ | Ակտ. լվացող միջոց , դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ 2.2% N,N-բիս/3 ամինոպրոպիլ , դոդեցիլամին 5 % , էթիլենդիամինտետրաքացախաթթու , ոչ իոնածին մակերեսային ակտիվ նյութեր , կայունացուցիչ , հոտավետ նյութեր և ջուր |

| | | | |
|---|---|---|---|
| 23 | Սիֆիլիսի որոշման թեսթ հավաքածու | հավաք | Սիֆիլիսի որոշման որոշման թեստ-հավաքածու Մեթոդ. ֆլոկուլյացիա, սկրինինգի համար;Ֆորմատ. 100 թեստ; Ստուգվող նմուշ. արյան շիճուկ/պլազմա; Հանձնելու պահին պիտանիությանժամկետի 2/3 առկայություն; Ֆիրմային նշանի առկայությունը; Սերտիֆիկատ. ISO 9001; Պահպանման պայմանները 2-8$^0$C, |
| 24 | Տրիգլիցիդներ 1X50 մլ, ներառյալ ստանդարտ | հավաք | Եռգլիցերիդների որոշման թեստ-հավաքածու Մեթոդ. ֆոտոկոլորիմետրիկ; Ֆորմատ. 1x50մլ; Ստուգվող նմուշ. արյան շիճուկ/պլազմա/; Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն; Ֆիրմային նշանի առկայությունը; Սերտիֆիկատ. ISO 9001; Պահպանման պայմանները 2-8$^0$C, |
| 25 | c-ռեակտիվ սպիտակուց 100 թեստ | հավաք | CL-ISO Սերտիֆիկատ ԳՈՍՏ |
| 26 | Ռոմանովսկի գիմզա | լիտր | 1 լ-ոց պլաստիկե տարայով |
| 27 | Քացախաթթու | կգ | 1 լ-ոց ապակյա տարայով |
| 28 | Հեմոգլոբին /4X100/X10 | հավաք | Հեմո•լոբինի որոշման թեստ-հավաքածու Մեթոդ: ֆոտոմետրիկՖորմատ. /4x100/x10; Ստու•վող նմուշ. արյան շիճուկ/պլազմա; |
| 29 | Միզանյութ 2X120 մլ, ներառյալ ստանդարտ | հավաք | Միզանյութի որոշման թեստ-հավաքածու Մեթոդ. կինետիկՖորմատ. 2x120մլ; Ստու•վող նմուշ. արյան շիճուկ/ պլազմա; |
| 30 | Իմերսիոն յուղ 100մլ | հատ | Տիպ-A –կլասիկ 1$_{22}$իկր -100մլ |
| 31 | Կոնտրոլ թեստ Մ-50 | տուփ | Ուրեասիս 1100 մեզի անալիզատորի կոլիբրացիայի համար ֆորմատ 50թեստ |
| 32 | Մեթիլեն կապույտ | գր | Փաթեթավորում 50գր |
| 33 | Էպինդորֆ | հատ | 1.5մլ |
| 34 | Ազոտական թթու | լիտր | 1 լ-ոց ապակյա տարայով |
| 35 | հեպատիտ Բվիրուսի անտիգենի որակական հայտնաբերմա | թեստ | Հեպատիտ Բ վիրուսի անտիգենի որակական հայտնաբերման թեստ հավաքածու , իմունոխրոմատոգրաֆիա սկրինինգի համար , ստուգվող նմուշ , արյուն , արյան շիճուկ/ պլազմա/ |
| 36 | Ստերանիուս | հատ | 20%-ոց լթ , 500մլ պլաստիկե շիշ |
| 37 | Անիոս ԴԴ Ան | հատ | Ամոնիումի պրոպիոնատ , ացետատ , N-պրոպանոլ , 750 մլ պլաստիկե շշով , մխոցով |

| | | | |
|---|---|---|---|
| 38 | Յոդ | հատ | 5% 30մլ ապակե սրվակ հանձ. պահին պ/ժ-ի 2/3-ի առկայություն, ֆիրմ. Նշանի առկ., պայմանական նշաններ |
| 39 | Ջրածնի պերօքսիդ | հատ | 3% 100մլապակե սրվակ հանձ. պահին պ/ժ-ի 2/3-ի առկայություն, ֆիրմ. Նշանի առկ., պայմանական նշաններ |
| 40 | Ձեռքի հակասեպտիկ գել | հատ | 227 մլ, հանձ. պահին պ/ժ-ի 2/3-ի առկայություն, ֆիրմ. Նշանի առկ., պայմանական նշաններ |

ԳՆՈՐԴ

<< Թիվ 22 պոլիկլինիկա >> ՓԲԸ
Հասցե՝ Նոր-Նորքի , 9-րդ զանգված
Վիլնյուսի 3 շենք 90

ՀՎՀՀ 00806733
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150012633220100
Տնօրեն ----------------------------------Լ.Մկրտչյան
/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Հավելված N 2
<<   >> <<   >> 20 թ. կնքված
N ,,ՊՈԼ22-ՇՀԱՊՁԲ-11/15,, ծածկագրով գնման պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Բ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2014 թ. | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I կիսամյակ | | | |
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | քանակը | գինը | քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | Ազոպիրամ | հատ | | 2 | | 2 | |
| 2 | ԱԼՏ 2X60 | հավաք | | 2 | | 2 | |
| 3 | ԱՍՏ 2X60 | հավաք | | 2 | | 2 | |
| 4 | ԱՍՕ-լատեքս 40 թեստ | հավաք | | 2 | | 2 | |
| 5 | Անիոս ժել | հատ | | 10 | | 10 | |
| 6 | Բիլիռուբին Դ+Տ -120մլ/120մլ | հատ | | 2 | | 2 | |
| 7 | Գլյուկոզա 4X100 , ներառյալ ստանդարտ | հավաք | | 8 | | 8 | |
| 8 | Ժավել սոլիդ | հատ | | 2 | | 2 | |
| 9 | Թրոմբոպլաստին 6X4մլ | հավաք | | 8 | | 8 | |
| 10 | Խոլեստերին 2X100 , ներառյալ ստանդարտ | հավաք | | 10 | | 10 | |
| 11 | Հեքսանկաս 1լ | հատ | | 1 | | 1 | |
| 12 | Թեստ ռեագենտ հակա Ա 10մլ | ֆլ | | 3 | | 3 | |
| 13 | Թեստ ռեագենտ հակա ԱԲ 10մլ | ֆլ | | 3 | | 3 | |
| 14 | Թեստ ռեագենտ հակա Բ 10մլ | ֆլ | | 3 | | 3 | |
| 15 | Թեստ ռեագենտ հակա Դ 10մլ | ֆլ | | 3 | | 3 | |
| 16 | Ցոլիկլոն C 5մլ | ֆլ | | 2 | | 2 | |
| 17 | Մ.գրյունվալդ | լիտր | | 1 | | 1 | |
| 18 | Մեզի անալիզատոր 1G գլյուկ. որոշ. | թեստ | | 300 | | 300 | |
| 19 | Մեզի անալիզատոր Կոմբուր10 ՌՈՒՔՍ100թեստ | հավաք | | 15 | | 15 | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 20 | Ռևմատոիդ ֆակտոր -100թեստ | հավաք | | 2 | | 2 | |
| 21 | Սոնոգրաֆիայի մածուկ 500մլ | հատ | | 15 | | 15 | |
| 22 | Սուրֆանյուս 1լ | հատ | | 1 | | 1 | |
| 23 | Սիֆիլիսի որոշման թեսթ հավաքածու | հավաք | | 4 | | 4 | |
| 24 | Տրիգլիցիդներ 1X50 մլ, ներառյալ ստանդարտ | հավաք | | 3 | | 3 | |
| 25 | c-ռեակտիվ սպիտակուց 100 թեստ | հավաք | | 4 | | 4 | |
| 26 | Ռոմանովսկի գիմզա | լիտր | | 5 | | 5 | |
| 27 | Քացախաթթու | կգ | | 1 | | 1 | |
| 28 | Հեմոգլոբին /4X100/X10 | հավաք | | 4 | | 4 | |
| 29 | Միզանյութ 2X120 մլ, ներառյալ ստանդարտ | հավաք | | 1 | | 1 | |
| 30 | Իմերսիոն յուղ 100մլ | հատ | | 2 | | 2 | |
| 31 | Կոնտրոլ թեստ Մ-50 | տուփ | | 1 | | 1 | |
| 32 | Մեթիլեն կապույտ | գր | | 50 | | 50 | |
| 33 | Էպինդորֆ | հատ | | 250 | | 250 | |
| 34 | Ազոտական թթու | լիտր | | 1 | | 1 | |
| 35 | Հեպատիտ Բ-վիրուսի անտիգենի որակական հայտնաբերման թեստ հավաքածու | թեստ | | 20 | | 20 | |
| 36 | Ստերանիուս | հատ | | 1 | | 1 | |
| 37 | Անիոս ԴԴ ԱԽ | հատ | | 1 | | 1 | |
| 38 | Ցող | հատ | | 50 | | 50 | |
| 39 | Ջրածնի պերօքսիդ | հատ | | 50 | | 50 | |
| 40 | Ձեռքի հակաանտիսեպտիկ գել | հատ | | 20 | | 20 | |

ԳՆՈՐԴ

<< Թիվ 22 պոլիկլինիկա >> ՓԲԸ

Հասցե՝Նոր-Նորքի , 9-րդ զանգված Վիլնյուսի 3 շենք 90

ՀՎՀՀ 00806733

Հայբիզնեսբանկ ՓԲԸ

Հ/Հ 1150012633220100

Տնօրեն --------------------------------Լ.Մկրտչյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

Հավելված N 3
<<    >><<    >> 20 թ. կնքված
N,,ՊՈԼ 22-ՇՀԱՊՁԲ-11/15 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| N | Ապրանքի անվանումը | Ընդամենը | Նախատեսվում է ֆինանսավորել <<թիվ 22պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի 2014 թ.միջոցների հաշվին ընդ.որում մատակարարմանը հաջորդող 20 բանկային օրվա ընթացքում |
|---|---|---|---|
| 1 | Ազոպիրամ | 100% | 100% |
| 2 | ԱLS 2X60 | 100% | 100% |
| 3 | ԱUS 2X60 | 100% | 100% |
| 4 | ԱՍՕ-լատեքս 40 թեստ | 100% | 100% |
| 5 | Անիոս ժել | 100% | 100% |
| 6 | Բիլիռուբին Դ+Տ -120մլ/120մլ | 100% | 100% |
| 7 | Գլյուկոզա 4X100 , ներառյալ ստանդարտ | 100% | 100% |
| 8 | Ժավել սոլիդ | 100% | 100% |
| 9 | Թրոմբոպլաստին 6X4մլ | 100% | 100% |
| 10 | Խոլեստերին 2X100 , ներառյալ ստանդարտ | 100% | 100% |
| 11 | Հեքսանյութ 1լ | 100% | 100% |
| 12 | Թեստ ռեագենտ հակա Ա 10մլ | 100% | 100% |
| 13 | Թեստ ռեագենտ հակա ԱԲ 10մլ | 100% | 100% |
| 14 | Թեստ ռեագենտ հակա Բ 10մլ | 100% | 100% |
| 15 | Թեստ ռեագենտ հակա Դ 10մլ | 100% | 100% |
| 16 | Ցոլիկլոն C 5մլ | 100% | 100% |
| 17 | Մ.գրյունվալդ | 100% | 100% |
| 18 | Մեզի անալիզատոր 1G գլյուկ, որոշ, | 100% | 100% |
| 19 | Մեզի անալիզատոր Կոմբուր10 ՌԻԻՔՍ100թեստ | 100% | 100% |
| 20 | Ռեմատոիդ ֆակտոր -100թեստ | 100% | 100% |
| 21 | Ռոնոգրաֆիայի մածուկ 500մլ | 100% | 100% |
| 22 | Սուրֆանյութ 1լ | 100% | 100% |
| 23 | Սիֆիլիսի որոշման թեսթ հավաքածու | 100% | 100% |

| | | | |
|---|---|---|---|
| 24 | Տրիգլիցիդներ 1X50 մլ, ներառյալ ստանդարտ | 100% | 100% |
| 25 | C-ռեակտիվ սպիտակուց 100 թեստ | 100% | 100% |
| 26 | Ռոմանովսկի գիմզա | 100% | 100% |
| 27 | Քացախաթթու | 100% | 100% |
| 28 | Հեմոգլոբին /4X100/X10 | 100% | 100% |
| 29 | Միզանյութ 2X120 մլ, ներառյալ ստանդարտ | 100% | 100% |
| 30 | Իմերսիոն յուղ 100մլ | 100% | 100% |
| 31 | Կոնտրոլ թեստ Մ-50 | 100% | 100% |
| 32 | Մեթիլեն կապույտ | 100% | 100% |
| 33 | Էպինդորֆ | 100% | 100% |
| 34 | Ազոտական թթու | 100% | 100% |
| 35 | Հեպատիտ Բվիրուսի անտիգենի որակական հայտնաբերման թեստ հավաքածու | 100% | 100% |
| 36 | Ստերանիուս | 100% | 100% |
| 37 | Անիոս ԴԴ Աs | 100% | 100% |
| 38 | Յոդ | 100% | 100% |
| 39 | Ջրածնի պերօքսիդ | 100% | 100% |
| 40 | Ձեռքի հակասեպտիկ գել | 100% | 100% |

ԳՆՈՐԴ

<< Թիվ 22 պոլիկլինիկա >> ՓԲԸ
Հասցե՝Նոր-Նորքի , 9-րդ զանգված Վիլնյուսի 3 շենք 90
ՀՎՀՀ 00806733
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150012633220100
Տնօրեն ---------------------------------Լ.Մկրտչյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Հավելված N 4

« » « » 2014թ. կնքված

Գնորդ

հասցե

հհ

հվհհ

Վաճառող

հասցե

հհ

հվհհ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N___
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__» «_________» 20 թ.

Պայմանագրի անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__ « «_____________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _

Գնորդն, ի դեմս_____________________________________________ և Վաճառողն՝ ի դեմս_____________________________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _________ 20___թ-ից __ _________ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Մատակարարման համառոտ նկարագիրը | Մատակարարման քանակական ցուցանիշները | Մատակարա-րումների ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------- | ------------ | | ---------- |

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են

Ապրանքը հանձնեց

(ստորագրություն)

ազգանուն

Կ Տ

Ապրանքն ընդունեց

(ստորագրություն)

ազգանուն

Կ Տ

Հավելված 5

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15 ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

# ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ

----------------------------------------------------------------------ն հայտնում է, որ ցանկություն ունի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

մասնակցելու <<ԹԻՎ 22 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՓԲԸ-ի կողմից ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15 ծածկագրով հայտարարված ընթացակարգի ---------------------------------------------------չափաբաժնին

Չափաբաժնի կամ չափաբաժինների համարները

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

--------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ իր

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

Հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2)համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ չունի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

Գերիշխող դիրքի չարաշահում և համամրցակցային համաձայնություն:

------------------------------------------------------------------------------------ի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

Էլեկտրոնային փոստի հասցեն է՝--------------------------------------------------------------------------------------:

Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

------------------------------------------------------------------------------------ --------------------------------

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

------------------------------_2014թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 6

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15 ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

## Գ ն ի   ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15 ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ----------------------------------------------ն առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ
ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
գների՝

| ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐՆԵՐԸ | ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԱՐԺԵՔ* | ԱԱՀ** | ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳԻՆԸ /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5=3+4 |
| 1 | | | | |

*3-րդ սյունակում նշված ,,Արժեքը,, ներառում է ինքնարժեքը և շահույթը
**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

__________________________________________________________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)
(ստորագրությունը)

Կ. Տ.

--------------------------------2014 թ.

(ամսաթիվը, ամիսը)

ՆԱԽԱԳԻԾ

ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ № ՊՈԼ22-ՇՀԱՊՁԲ-11/15

ք. Երևան

—, ———.

2014թ.

«----» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն -----ի, որը գործում է կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. *Համաձայնության առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է «Թիվ 22պոլիկլինիկա» ՓԲԸ–ի կողմից կազմակերպած «ՊՈԼ22-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում և նշված ընթացակարգի շրջանակներում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 «Թիվ 22պոլիկլինիկա» ՓԲԸ–ի կողմից կազմակերպած ,,**Քիմիական նյութերի** ձեռքբերման,, № « ՊՈԼ22-ՇՀԱՊՁԲ-11/15» գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ----/թվերով/-------------/տառերով/---------------պայմանագրի ընդհանուր գնի 10%-ի չափով:

1.2 «Թիվ 22պոլիկլինիկա» ՓԲԸ–ն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ–ին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող ցանկացած բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով Ընկերությունը հանձնարարում է իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում «Թիվ 22պոլիկլինիկա» ՓԲԸ–ի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. *Այլ պայմաններ*

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև վերը նշված պայմանագրի կատարման վերջնաժամկետը:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց «Թիվ 22պոլիկլինիկա» ՓԲԸ–ի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

*Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները*